

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԵՂԵԻԻՆ
(Զրույց)**

Նախօրեակ էր Նաւասարդի,
Մայր էր մտեր արեւը նոր,
Թաղին վերեւ երկու բարտի
Կը հսկէին խորհրդաւոր:

Ու խարշափին ներքեւ անոնց՝
Երկու ստուեր գաղտագողի,
Մէկը՝ տղեկ կրակ ու բոց,
Միւսը՝ մատղաշ նայիրուհի:

Կը խօսէին անոնք երկար,
Ու մեղմաձայն կը վիճէին,
Պատանեկիկը խանդավառ
Ու հիացիկ նայիրուհին:

Ու մինչ տակաւ քունը թեթեւ
Անմեղութեան՝ կու գար, ծաւի,
Աներեւոյթ իբրեւ թիթեռ,
Թարթիչներուն իրենց թառիլ,

Որոշեցին՝ օրը յաջորդ,
Գաղտուկ, կանխել այգը վըճիտ,
Վազել այգին ամենամօտ,
Անցնիլ ապա պուրակը խիտ,

Եւ, ըստ կարգին հրնամենի,
Քաղել ծաղիկ ածուներէն,
Քաղել ձորէն մուրտ ու դափնի,
Քաղել նորոգ պտուղներէն,

Ու կութքն իրենց, սիրտով մաքուր
Ու խնդութեամբ անկշռելի,
Տանիլ մինչեւ մեղեանը սուրբ՝
Հիւրընկալ դիք Վանատուրի:

*

Եւ արթնցան, բարի լոյսին,
Երկու մանուկ՝ Տորք ու Սիրան.

Սակայն հազիւ մեծ դարպասին
Կիսաբացեր էին դռնակն,
Ընկրկեցան զարմանահար...

Ամանորի երկինքին տակ
Կատաճ էր այս դիւահրնար,
Թէ՛ անիմաստ շարադիւթանք...

Անհետացէ՛ր էր ծառուղին
Ձիւնին ներքեւ միապաղաղ.
Ուռիններուն տեղ սխրալի՝
Կըմախացած ոստեր նիհար,
Ձոր կը գրկէր եղեամբ խիտ,
Կը դողային ջրափն ի վար:

Չկար ծիծառն, ու արագիւն
Ալ չէր թակեր կոշնակը իր.
Միայն մսկոտ երկու ճնճղուկ
Կը կտցէին ձիւնը մաքուր,
Որ կը ծածկէր ուղէշ ու ծիղ,
Իբրեւ ծաղիկ ականախըտիղ...

- «Ի՛նչ են եղեր արտերը, Տորք,
Որ ոսկի ծով էին երէկ.
Ինչո՞ւ լուռ է աղբիւրը յորդ.
Այս որքան ձիւն ամէնուրեք...»
Հարցուց, տրտմած, Սիրանն եղբօր.
Սակայն Տորք ինքն ալ չէր գիտեր...:

Ու վարանած ու մտահոգ
Թէեւ արդէն, չես գիտեր բայց
Ինչ երազով գօտեպնդուած,
Ճամբայ ելան Սիրան ու Տորք:

Անգոսնեցին ձմեռը վաղ,
Քաղեցին լուռ երկար ատեն,
Անցան անխօս ձիւնախաղաղ
Կածաններէն, անցան արտէն

Իրենց թափուր, ու քալեցին,
Գուշակեցին մինչեւ հեռուն
Ծանօթ ծառերն ուրուատեսիլ
Մրգաստանին բազմաբեղուն:

Երբ վշտահար տեսաւ աղջիկն
Իր սիրական խնձորի ծառն,
Որ կը դողար՝ բզիկ-բզիկ
Զիննի թեթեւ շերտեր վըրան:

- «Տո՛րք, ծառս ինչո՞ւ պտուղ չունի»,
Վախով դարձեալ հարցուց եղբօրն.
«Օ՛, անտէր բոյն մը թռչունի.
Արդեօք ո՞ր է թռչունը, Տո՛րք...»
Բայց պատասխան չունէր տըղան:

*

Հիմա, մըռույլ ու ձեռնունայն
Երկու մանուկ յուսակտուր՝
Վերադարձի ճամբէն ամայ,
Սակառն ու գիրկն իրենց թափուր,
Կու գային տուն, անապահով,
Ամանորի առաւօտով...

Բայց մինչ անոնք կը շտապէին
Այգեստանէն դէպի քաղաք,
Խուլ եռուզեռ մը ծայր կու տար
Ծառերուն մէջ մրգաստանին
Ու պուրակին ձմեռնահար:

*

Զարկաւ միմեանց ընկուզենին
Իր ձիւնապատ ոստերն հզօր,
Հովը տարաւ պատգամը իր
Մինչեւ դաշտերը հեռաւոր.

Շշուկն անցաւ ծառէ ի ծառ,
Ու բազմաբեր ծառերը չոր
Աւելի մօտ եկան իրար,
Կազմեցին նիստ հանդիսաւոր:

- «Ծառեր», ըսաւ ընկուզենին,
Թօթուելով իր վարսերը սառ,
«Տօ՛ն է այսօր Նաւասարդի,
Այգիներուն տօնն է պայծառ,

Ու մենք կարծես ոչինչ ունինք
Հայ աշխարհի տղոց համար...»

Տեսաք՝ ինչպէ՞ս մանուկներն այն
Եկան խնդրել մեզմէ պտուղ,
Ու սրտաբեկ ու ձեռնունայն
Վերադարձան տրտում տխուր.

Անոնք երբեք, զի, չըտեսան
Թէ՛ մենք ինչպէ՞ս էինք լեցուն
Բարիքներով հազար տեսակ
Ու միրգերով քաղցր ու հասուն...

Հարկ է որ մին մեզմէ, հիմա,
Յանուն արբշիռ Վանատուրի,
Հայ տղայոց աչքը բանայ
Զինչ խորհուրդին Ամանորի.

Ըսէ՛ թէ չէ՛ սառնամանիք,
Թէ՛ միմիայն պատրանք է սա,
Թէ՛ կը ծածկեն անթիւ ծաղիկ
Դաշտ ու բլուր, ծըմակ ու սար,

Թէ՛ մեր ոստերն են ծանրաբեռն,
Հին տօներուն ինչպէ՞ս էին,
Պտուղներով ամենաբեր՝
Հիւրընկալ դիք Վանատուրի...»:

*

Բայց սառնաշունչ այդ օդին, ո՞վ,
Ո՛ր մէկը լերկ այդ ծառերէն,
Դողդղացող արմատներով
Պիտի շարժիլ կրնար տեղէն...

*

... Յանկարծ, վերէն սեպագանգուած
Սարալանջէն մշուշապող,
Զայնեց մայրին մշտականաչ,
Առոյգ մայրին ձայնեց անոնց.

- «Ո՛վ մայր ծառեր մօտ ու հեռու,
Թէ՛ եւ մինակ կ'ապրիմ ես վերն,
Առանձնութեան մէջ սարերուն,
Ուր լոկ հովեր ինձ կ'այցելեն,

Ու չեմ, ինչպէս էք դուք, բեղուն,
Բայց կը սիրեմ երկիրը մեր,
Երկիրը իմ ալ հայրերուն,
Ու մանուկներն իր կը սիրեմ:

Բերէ՛ք ինծի, ձեր միրգերէն,
Ինչ որ ունիք՝ բերէ՛ք բոլորդ.
Աներեւոյթ միրգերը ձեր,
Վանատուրի կամքովն հօօր,

Պիտի դառնան իրաւ միրգեր.
Ինչ որ ունիք բերէ՛ք շուտով,
Թող ամէն ոք իրը բերէ,
Ողջ մերկանան ոստերը թող...»:

*

Ու թօթուեցին միահամուռ
Ծառերն իրենց միրգերն անոյշ
Դէպի մայրին հեզահամբոյր.
Ընկուզենին տըլաւ ընկույզ,

Տըլաւ խնձոր՝ խնձորենին,
Տըլին եւ այլք փշատ ու թուզ,
Ու նշենին՝ նուշ, ու կաղինն
Իր՝ կաղնենին անտառաբոյժ:

- «Յանուն անմահ՝ Վանատուրի»,
Ոգեց մայրին մեղմաշշունջ,
Խլեց հողէն արմատներն իր
Ու, քայլերով մեծվայելուչ,

Ինկաւ ճամբայ դէպի քաղաք,
Ու մշուշին մէջէն տամուկ,
Ու վըրայէն ձիւնին ճերմակ,
Իբրեւ ածու մշտագարուն,
Իբրեւ աշուն մրգապատար,

Մեծ քայլերով գնաց առաջ
- Կարծես թեւեր ըլլար առած -
Հասաւ տղոց, անցաւ զանոնք.
Բայց չըտեսան զինքը տըղաք...:

*

Երբ տուն հասան Տորք ու Սիրան,
Զինաթաթախ, ցրտասարսուռ,
Խարոյկին դէմ կրակատան
Մայրի մըն էր կանգնած, որուն
Կը կըքէին ճիւղերն այնքան
Երփնալոյսով, միրգով լեցուն,
Որ ան կարծես իր ոսկեհոռ,
Իր լուսարծաթ ցանցերուն մէջ
Վար էր բերեր արեւառէջ
Հայոց երկինքն աստղաձեղուն...:

*

Նոյն մայրին է, անոյշ տղաք,
Որ կ'այցելէ ամէն տարի
Ձեզ, անցնելով ծով ու ցամաք,
Յաւուր օրհնեալ Ամանորի:

Ան՝ մշտագոյն անմահ ոգին
է հայրենի մեր սարերուն,
Որ ձիւնին մէջ ու գիշերին,
Կը ժպտի ձեր երազներուն:

Բայց, մանաւանդ, ո՛վ հայ տղաք,
Տղաք նետուած երկրէ երկիր,
Ան, սայրասուր ինչպէս նիզակ,
Սըլաքուած գորշ հորիզոնին,
Մշտաչալուրջ իբրեւ պահակ,
Կը սպասէ ձեր վերադարձին...:

Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

Գահիրէ, 1954

